

Շիրակում (Երեւանի նահանգ եւ Կարսի շրջան) եւ Չորափորում (Քորչալուի գաւառ): Բայց կարող է եւ այսպէս լինել: որ այդ հետաքրքրական գրութեան ձեւը ծագումն է առել մի որ եւ է գաւառում եւ միայն յետոյ է ընդհանրութիւն գտել: Այս դէպքում, եթէ հետախուզուին հնագրական տեսակէտից արձանագրութիւններ Հայոց աշխարհի զանազան անկիւններում, միանգամայն կը պարզուի, թէ Հայոց ո՞ր գաւառն է մշակել գրութեան այսպիսի մի պարզ ձեւ, եւ թէ ի՞նչ ծագում ունի Եօթնգետի հայ գաղութը, որի գոյութիւնը հնում անթիտելի է, մանաւանդ այժմ, երբ Պիշպէքի գերեզմանատան երեւան է եկել հայերէն արձանագրութիւն: Եօթնգետի արձանագրութիւնը, որը տալիս է մեզ « տառի երկաթագրից բոլորագրի փոխուող ձեւը, պատկանում է ԺԳ դարի, ուրեմն այնպիսի մի ժամանակի, երբ բոլորագիրը մշակուած էր արդէն: Այս հանգամանքը միանգամ եւս ապացուցանում է, թէ ինչպէս ուրեմն կենդրոնում մեռած ձեւերը շարունակուում են դեռ եւս կեանք ունենալ հեռու սահմանագլուխներում կամ գաղթավայրերում: Մինչեւ անգամ երկաթագրի հնագոյն տիպը, այն՝ որ կլորակ ունի, մինչ Անիում, Հայոց քաղաքակիրթ կեանքի կենդրոնում, տեղի էր տուել նոր ձեւերի, սահմանագլուխներում եւ Վրաստանին սահմանակից վանքերում դեռ պահուում էր, ինչպէս այդ տեսնում եմ Թ. Գ. Բերենշտամի արձանագրութիւնների նմանագրոյններից, որ այժմ մօտս են:

Ասորական արձանագրութիւնը մի տող է աջ կողմում՝ ուղղահայեաց, վերեւից ներքեւ, թողել ենք այնպէս՝ ինչպէս հանուել է կտաւի վերայ, թեթեւ տուչ քսած. կարդացուում է այսպէս.

« Այս է տապան Յովհաննէսի, հայոց
եպիսկոպոսի. »

Եպիսկոպոսի անունը այնպէս է գրուած, որ սովորական «իւնան» ձեւի տեղ, կարելի է կարդալ եւ շօ, որ եւ հաւանական է, մանաւանդ որ հայերէնի մէջ էլ Յովան է գրուած, փոխանակ դասական Յովան կամ Յովանէս՝ ձեւերի: Ասորերէն արձանագրութիւնը թէեւ գրած է կողքից եւ անհամեմատ աննշան է հայերէնից, բայց եւ այնպէս առաջ այն է փորագրուած. ապա թէ ոչ փորագրողը հայերէն արձանագրութեան մէջ «եպիսկոպոս» բառը կը գրէր ամբողջովին մի տողում եւ հարկ չէր լինի ան-

ըատել վերջին « վանկը եւ զետեղել բաց տեղում:

Հայերէն արձանագրութիւնը կարգում եմ այս կարգով.

Խաչի չորս անկիւնում. $\left. \begin{matrix} \text{« ԲՅ } \text{ՅՅ } \\ \text{ՏԻ } \text{ԱՃ. »} \end{matrix} \right\}$
 Խաչի հիմքում. « ՏԻ Յովան հայոց եպիսկոպոս. »
 Խաչի շուրջը. « Է Էվ հայոց ԷՃՀԲ. Իրեցս՝ յէս-
 րակարան: »

Այսպէս Պիշպէքի գերեզմանատան, ինչպէս երեւում է, թաղուած է եղել Յովհաննէս Հայոց եպիսկոպոսը, եւ նորա յիշատակը յաւերժացրած է հայերէն արձանագրութեամբ 772 Հայոց տոմարով. (=1323. Բ. Յ.) Այս հանգամանքը հիմք է տալիս կարծելու, որ յիշատակարանը խօսում է ոչ մի եղակի մարդու մասին, որին բախտը ձգել է հայրենիքից հեռու, մի այդպիսի երկիր. այլ ցոյց է տալիս, որ այնտեղ եղել է շատ թէ քիչ նշանաւոր հայ գաղութ: Այս խնդրի վերայ կարող են լոյս սփռել նոր արձանագրութիւններ, եթէ միայն գտնուին: Մինչեւ այժմ հրատարակուած Եօթնգետի տապանագրներում ոչ մի էական ակնարկութիւն չկայ, թէ այս կողմերում հնում հայկական տարր եղել է: Նկատենք սակայն, որ թիւ ԺԲ եւ ԺԳ երկու արձանագրութեան մէջ (Արեւելեան հնութիւններ. Աշխատութիւնք Արեւել. Յանձ. Մոսկ. Կայս. Հնագ. ընկերութիւն Մոսկ. 1889 տարւոյ Ա, երես 34, թիւ 167. եւ երես 32, թիւ 31.) պատահում է առօրտ անունը. որ յիշեցնում է Պողոս անուան հայկական ձեւը, ինչպէս այդ ցոյց է տուել արդէն Սլուցկիյն (անդ, էջ 59): Սոյնօրինակ հայկական ձեւեր կարելի է ցոյց տալ եւ Խալոյսնի հրատարակած տապանագրներում (Syrisch-Nestor. Grabinschriften aus Semirjetschie, Mém. de l'Acad. des Sc. VII Série, T. XXXVII, Nr. 8. S. P. 1890.) եթէ միայն այսպիսի ինքն ըստ ինքեան աննշան, եւ կարելի է մինչեւ անգամ պատահական նմանութիւնները (գու. գաղիպութիւնները) հասցրնէին որ եւ իցէ ճիշդ եզրակացութեան. Աւելի հետաքրքրական է մեզ Խալոյսնի նկատողութիւնը. « 1375 տարւոյ կատալոնեան ատլասի վրայ Սույկ-Կօլի հարաւակողմը նշանակուած է՝ Հոյ-կուան Վանք մը Ս. Մատթէոսի (էջ 127 նոյն աշխատութեան. Auf der catalonischen Karte vom J. 1375 ist südlich vom Suyk-Kol verzeichnet; «ein armenisches Kloster des St. Matthaei.») ճիշդ է՝ պրոֆեսորը աւելացնում է, որ «նեստորական մի վանք է լինելու, վասն զի